ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 19/01

ք. Երևան *« 25 » հունվարի 2019*

«Էյ Էս Սի» ՍՊԸ-ն (այսուհետ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ալեքսանդր Իսպիրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և

«Հայաստանի Հանրապետի հեռուստաընկերություն» ՀՀ ՊՀ-ն

(այսուհետ Պատվիրատու), ի դեմս տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի,
որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

2. Պայմանագրի առարկան և պայմանները

2.1. Կատարողը պարտավորվում է մատուցել Պատվիրատուին հետևյալ ծառայությունը՝

2019թ. ընթացքում կազմակերպել յոթ սեմինար «Հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները և նորությունները» և «Աշխատանքային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները և նորությունները» թեմաներով՝ դասախոսության և հարց ու պատասխանի ձևաչափով (այսուհետ Սեմինար):

2.2. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների արժեքը /պայմանագրի արժեքը/ մեկ մասնակցի համար կազմում է 90,000 (իննսուն հազար) ՀՀ դրամ: (Ընկերությունը հանդիսանում է շրջանառության հարկ վճարող) :
2.3. Վճարումն իրականացվում է սույն պայմանագիրը ստորագրելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:
2.4. Բոլոր վճարումներն իրականացվում են բանկային փոխանցումների միջոցով: Փոխանցումներն իրականացվում են Կատարողի բանկային հաշվին, որը նշված է Պայմանագրում:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Պատվիրատուն պայմանագրի գործողության ընթացքում իրավունք ունի պահանջել Կատարողից մատուցվող ծառայությունների պատշաճ կատարումը:
3.2. Պատվիրատուն պարտավոր է ժամանակին վճարել Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց սույն պայմանագրի 2.2 կետում նշված գումարը:
3.3. Կատարողը պարտավորվում է ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր առաջ տեղեկացնել Պատվիրատուին հերթական սեմինարի օրվա և ժամի մասին:
3.4. Կատարողը տրամադրում է Պատվիրատուին վերջնական հաշիվ՝ վերջին սեմինարի օրը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս մաժոր)

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Պայմանագիրը կարող է ձևափոխվել կամ փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ դադարեցվել կողմերից մեկի ցանկությամբ՝ 2 (երկու) շաբաթ առաջ ծանուցելով մյուս կողմին:

5.2. Պայմանագրի կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ օրենսդրության:

5.3. Պայմանագիրը գործում է մինչև 2019 թ. դեկտեմբերի 30-ը:

5.3. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու
« Էյ Էս Սի » ՍՊԸ	«Կայսերական հեռուստաընկերություն» փԲԸ
ՀՀ, Երևան,	Հասցե ՀՀ, ք. Երևան
Լալայանց 47/ա շ., 22 բն.	Գ. Դոխուերյան 26
Հեռ. (+374) 95 58 36 01	
Հեռ. (+374) 95 58 36 02	
Բանկ: Ինեկոբանկ ՓԲԸ	Հեռ. (+374) 10 65 00 15
h/h. 2052022108401001	Բանկ: «Արդշինբանկ» փԲԸ
	h/h. 24701027967400 00
ՀՎՀՀ 02587852	ՀՎՀՀ 01540062
	Էլ. հասցե
Տնօրեն Ա. Իսպիրյան	Տնօրեն Ռ. Գրիգորյան

ASC